



ՄԻՀՐԱՆ Խ. ԹԱՊԱԳԵԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԸ

(412 — 1912)



ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1500 ԱՄԵԱՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻ

*Գիրս նշանագրոց
Հայաստան ազգին հաստատել
Կորիսն*



Կ. Պոլիս — Պալար

1913

Ֆեշիշեան Տպարան


2001.

003

թ-24

ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԸ

(Կ Լ Յ — Լ Ծ Լ Յ)



ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1500 ԱՄԵԱՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ

„Վոզդվուրդ մը որ իր ծո-
“ցէն այնպիսի մարդիկ ծնած
“է (մեքի հոկաներ) եւ զանոնք
“իբր դիւցազներ կը յարգէ,
“որչափ քէ անոնց օրինակին
“հեճելի, անկարելի է որ խ-
“պառ “ի սպառն ջնջուի. որչափ
“ալ” Թուրք, Բուրդ, Թաքար,
“Պարսիկ եւ բոլոր մեծ պե-
“տուրիւնները հակառակ քլ-
“լան անոր:”



ՏՈՔԹ. ՅՈՎ. ՄԱՐԿՈՒԱՐՏ

Ա Ն Ձ Ե Ր

Առանդուրիւն

ՎՐՈՅՐ

Բանասիրուրիւն

ՆՈՐԱՅՐ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԸ



Տ Ր Ա Մ Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն



ՎՐՈՅՐ — Աւանդութիւնը կը ներկայացնէ
ՆՈՐԱՅՐ — Արդի բանասիրութիւնը



(Նորայր թաղուած իր մատենադարանի ցեր
ու ցան կուտակուած գիրքերուն մէջ՝ կը հետա-
ջօտէ Հայոց Գրերու գիւտին վրայ գըր-
ուած նորագոյն ուսումնասիրութիւնը: Երբ յան-
կարծ իր բարեկամներէն մին՝ Պ. վրոյր ներս կը
մտնէ քրքջաձայն խնդալով:)

ՎՐՈՅՐ (Բրբիջով,) բարե՛ւ, Պ. բանասէր-բա-
նաստեղծ, ատ ի՞նչ մեծ ու անակնկալ յայտ-
նութիւններ ըրեր էիր «Հայոց Նշանագրերու
Գիւտը» ընդարձակ ուսումնասիրութեանդ մէջ:
Շիտակը կը ծափահարեմ այն նորածին հան-
ճարը, որ ամէն բան կը ժխտէ, իբրև նորածին
Սատան մը:

ՆՈՐԱՅՐ.— Դեռ Աստուծու բարին չըսած, հեգնութեանց կարժը սկսար քակել, սակայն հեգնելէ առաջ արդի փորձառական դրութենէն երբեք չհեռանալով դիտելու էիր Հայ անցեալին յիշատակարանները, որոնք հեգնանքով չեն խօսիր, այլ սուր դիտողութեամբ:

ՎՐՈՅՐ.— Խնդրեմ, Պ. բանասէր, ձեր խօսածներէն դեռ բան մը չկրցայ հասկնալ, արդեօք ի՞նչ ըսել կ'ուզէիք:

ՆՈՐԱՅՐ.— Աւանդապաշտ պարոն, մատենագրական ծանր խնդիրներու վրայ, թէև, ուէ հաստատական պատասխան տալ դժուար է, բայց իրողութեանց համեմատական ուսումնասիրութեամբ կարելի է այդ անել ճամբէն դուրս դալ:

ՎՐՈՅՐ.— Եթէ այդ «անել ճամբան» Հայոց գրե՞րն ըլլան, կարծեմ՝ արանդորքնէն դուրս ուրիշ ճամբայ որոնել աւելորդ է:

ՆՈՐԱՅՐ.— Սիրելիս, արդի բանասիրութիւնը աւանդութիւններն ալ կը զտէ, տե՛ս ի՞նչպէս բաղդատութեան կը դնեմ Ս. Մեսրոպի աշակերտին և կենսագրին՝ Կորիւնի հետ, Ղազար Փարպեցին և աւանդապաշտներուդ կուռքը՝ Մովսէս Խորենացի Պատմահայրը:

ՎՐՈՅՐ (չուրջ).— Հիմայ, թողլով այդ ամենը, զիս կրնա՞ս համոզել թէ Հայոց Գրերու գիտք ի՞նչպէս եղած է:

ՆՈՐԱՅՐ.— Թէև կը խոստովանիմ թէ՛ Գրոց գիւտի պատմութիւնը դեռ վերջնականապէս լուսաբանուած չէ, ո՛չ Հայ բանասէրներէն և ոչ իսկ եւրոպացի հայագէտներէն, բայց Հայ պատմութեան մէջ ցրիւ գտնուած վկայութիւններէն եզրակացութեան մը յանգիլ դժուարին չէ :

ՎՐՈՅՐ (բարկութեամբ). — Եղբա՛յր, Հայ ազգաբեռներու սկզբնական արմատը գտնուած է :

ՆՈՐԱՅՐ.— Թէև Հայ ազգաբեռներու ըսկզբնական հիմը մթութեան մէջ ծածկուած կը մնայ դեռ, բայց հետաքնին աչք մը կը բուէ համոզուելու համար թէ՛ Հայոց Գրերը Ս. Մեսրոպայ մտքին ծնունդն են :

ՎՐՈՅՐ.— Դարձեալ բան մը չկրցայ հասկընալ, եղբայր, պարզ խօսէ որ սա մեր ազնիւ հանդիտականներն ալ բան մը կարենան քաղել ձեր թանկագին քննութիւններէն կամ պիտի ըսէի, գիւտերէն, որոնք «Հայ Գրոց Գիւտի հաղար հինգ հարիւրամեակ»ի պսակը պիտի ըլլան, կարծեմ (հեզնօրէն) :

ՆՈՐԱՅՐ.— Թէև որոշ աւանդութիւն մը չկայ Հայ գրերու ծագման մասին, բայց հիմնուելով Հայ և օտար գիտնականներու հաւանականագոյն ենթադրութեանց վրայ և միաժամանակ բնաւ չչեղելով մեծ վարպետի կենսագիր Կորիւն պատմագրէն, պիտի ջանանք որոշ եզրակացութեան մը յանգիլ :

ՎՐՈՅՐ.— Հայ աղլիարեւոքի ծագումը աստ-
րակա՞ն է թէ յունականն և եթէ այս երկու
աղլիարեւաներէն և ոչ մէկն է, ընդունի՞նք զա-
նոնք բացարձակ Մեսրոպեան:

ՆՈՐԱՅՐ.— Լագարդ, Հիւբշման, Գարդ Հաու-
սէն և Լեպսիոս Մաշթոցեան նշանագրերու հիմ-
կ'ընդունին Յունարէնը: Ասոնցմէ առաջինը Լա-
գարդ Հայ Գրերը ճոխացած կը նկատէ խպտա-
կան չորս տառերով ձ. Վ. Ձ. Հ. ինչպէս նաեւ
Ասորի Յ. Ծ. նշանագրերով, մինչ Վ. ուրիշ գիր
չէ, այլ Ի-ի կրկնումը, ինչպէս Ռ, Բ-ի, Ղ, Լ-ի,
խկ Տոքթ. Յովսեփ Մարկուարտ Հարաւային-
Հայաստանի մէջ բնակող Գանիէլ Ասորիին կը
վերագրէ Հայ գրերու գիւտը և սակայն միւսՆ-
գեսաբնակ Գանիէլ Ասորիէն տարբեր մէկն է,
ոչ ներկայ է եղեր Ս. Սահակայ գումարած
410-ի ժողովին:

ՎՐՈՅՐ.— Հա՛, ասանկ գրերով խօսէ որ,
խելքս բանի մը պառկի:

ՆՈՐԱՅՐ.— Աւանդապաշտ բանասէր, պահ մը
մէկգլի թողլով կատակը, եթէ խնդալ կ'ուզես
Սուտ Խորենացին կարդա՛, ինծի կրնայի՞ր ըսել
թէ՛ Գանիէլեան կոչուած նշանագրերը Գանիէլ
Ասորիին հնարածն էին թէ աւելի հին շրջանի
մը գիւտն էին:

ՎՐՈՅՐ.— Ոչ թէ Գանիէլի հնարածն էին,
այլ թէ անոր քով պահուած էին իբրեւ հին

Հայոց նշանագրերը, զորս մեր գրասէր թագաւորն Վառաձապուն Ս. Մեսրոպի խնդրանքով բերել տուաւ Վահրիճ անուն մէկու մը, անշուշտ պաշտականի մը միջոցաւ :

ՆՈՐԱՅՐ.— Ս, Մեսրոպ Հայ ազգիաբետքն կրցա՞ւ կազմել անոնցմով :

ՎՐՈՅՐ.— Ոչ, բայց ստուգելու համար ելաւ անձամբ գնաց Եղեսիա Գանիէլ Ասորի եպիսկոպոսին մօտ, որ իր անկարողութիւնը անկեղծօրէն խոստովանելով հանդերձ՝ ըստ մեր պատմահօր (Խորենացի) Պղուտոսի միջնորդութեամբ յղեց զայն Սամոս Հելլէն նկարչութեան քաջհմուտ Հռոփանոսի, որ դեռ նոր մեռեր էր :

ՆՈՐԱՅՐ.— Նախ Սամոս ո՞ւր, Սամոսատ ո՞ւր, ահա Խորենացի տեղագրութիւնը ա՛յդքան կը հասկնայ. սիրելիս, եթէ կը բաղձաս բանասիրութեան տաճարէն ներս մտնել, կարգա՛ Գարրիի/ի/ի/ի հակախօրէնեան ուսումնասիրութիւնները : «Աղբերք Մովսէսի Խորենացւոյ» մասալ մասալ մաթիթասներու դարը անցած է ա՛լ :

ՎՐՈՅՐ.— Դուն չե՞ս հաւտար Մովսէս Խորենացւոյ պէս ստուգապատում, ճարտասան, բանաստեղծ մեծ պատմաբանի մը, կ'ուրանա՞ս Հայ հերոգոսին փառքը :

ՆՈՐԱՅՐ.— Խնկելի է անոր յիշատակը իբրև ճարտասան և մեծ քերթող, արժանի դողութան երգիչներու կամ վիպասաններու փառքին :

վիպասան մըն է այն և ո՛չ թէ պատմաբան, որ
նսկեղարէն դարերը վերջ (Ը—Թ.) ծնած է ըստ
արդի քննութեանց :

ՎՐՈՅՐ.— Ժխտելով բան մը չենք շահիր,
այլ հաստատելով :

ՆՈՐԱՅՐ.— Հայ հերոգոտը Բիւզանդ Փաւս-
տոսն է կամ աւելի ճիշդ պիտի ըլլար զայն
խմբագրող և Ս. Մեսրոպայ վարուց միակ պատ-
միչ՝ Կորիւն Սքանչելին է :

ՎՐՈՅՐ.— Ես նշանախեց մը իսկ չեմ զո-
հեր եւրոպացի կամ Հայ հայագէտներու իմաս-
տակ ենթադրութիւններու օգային սեղանին
առջեւ :

ՆՈՐԱՅՐ.— Խնդրեմ, մեր խնդրէն չը շե-
ղինք, Դանիէլեան նշանագրերը ե՞րբ հնարուե-
ցան և մինչև ե՞րբ տեւեց անոնց գործածու-
թիւնը :

ՎՐՈՅՐ.— Կուզե՞ս որ Հայոց գրերու հնու-
թեան նկատմամբ հայ և օտար աղբիւրներ
վկայութեան բերեմ :

ՆՈՐԱՅՐ.— Պայմանաւ որ մասալ չըլլան
անոնք, և կամ Խորենացւոյ բառով «անբաւ
դրուցած մատեանք» չըլլան :

ՎՐՈՅՐ.— Հ. Ինճէճեան, Մկրտիչեան, Իս.
Յարութիւնեան, ասորական, պարսկական և յու-
նական գրերու գործածութենէն շատ առաջ՝
կ'ընդունին Հայ սեպհական գիր մը, որ վաղեմի

գրականութեան մը ծնունդ տուած է, մինչ վեներ-
տիկեան բանասէր Հ. Սարգսեան Գ. կամ Գ. դարուն
յարմարցուած կը կարծէ:

ՆՈՐԱՅՐ.— Ես մասալ մտիկ ընելու գլուխ
չունիմ, եթէ ունիս Հայոց գրերը մասնագիտութիւն
ընող հեղինակ մը, մէջբեր անոր մէկ համոզկեր
հատուածը, որ ամէնքս ալ համոզուինք ու խըն-
դիրը ճակտիդ շուրջ գափնի մը բողբելով փա-
կենք:

ՎՐՈՅՐ.— «Հայոց գիրի գիւտ»ով մասնաւո-
րապէս կը զբաղի Իս. Յարութիւնեան, որուն
կարծիքով հին հայկական գրի ծագումը և գոր-
ծածութիւնը կ'իյնայ նոյնպէս կռապաշտական
չրջանին. կը գրէ «Ամէն կրօն առանձին քաղա-
քակրթութիւն մըն է և սերտօրէն կապուած է
գրի ո՛ր և է տեսակի մը հետ: Զննուելով կրօնը,
կը ջնջուի նաեւ այդ քաղաքակրթութիւնը ու
գիրը եւն.»։ Այդպէս է եղած Հայոց վաղեմի
գրին համար, զոր Պարսիկ, Ասորի և Յոյն վտա-
րած են և կամ իսպառ բնաջինջ ըրած:

ՆՈՐԱՅՐ.— Փոխանակ ա՛յսքան յողնելու
ըսէիր թէ Դանիէլեան գիրը հնարուած է Քրիս-
տոսի երկրորդ դարէն առաջ և Լուսաւորչի ժա-
մանակ ոչնչացուած է, (Գ. դարը) Քանի՞ գրէ
բաղկացած էր Դանիէլեան այբուբէնը:

ՎՐՈՅՐ.— Թէեւ ժամանակակից պատմիչ-
ները բան մը ըսած չեն այս մասին, սաչափ

միայն կը գրեն թէ՛ Դանիէլեան գրերը անբա-
ւական էին Հայերէն գրելու համար. ինչպէս կը
գրէ Կորիւն «իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ
չեն բաւական նշանագիրքն՝ ողջածել զսիւղորայս
և զկապս Հայերէն լեզուոյն» (Կոր. էջ 9):

ՆՈՐԱՅՐ.— Հա՞պա 22 թիւը ո՞վ հնարեց,
ՎՐՈՅՐ.— Վարդան պատմիչ է որ առաջին
անգամ կը գնէ 22 թիւը, Վարդանագիրքը՝ 17,
Դաւիթ Անյաղթ փիլիսոփան՝ 24, Ասողիկ և Ոս-
կեփորիկ, Կայսերաց Գիրք՝ 29 կը նշանակեն:

ՆՈՐԱՅՐ.— Աս ի՞նչ լարիւրինթոս է, պատ-
ճա՞ռ-Կորիւն և Ղ. Փարպեցի կը լռեն. իսկ Խո-
րենացի «քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ
ըստ ձեւոյ օրինակի յունականին զվազնջուց գրեալ
նշանագիր տառից (Խոր. Գ. ԾԲ.):»

ՆՈՐԱՅՐ.— Անոնք որ 22 կը նշանակեն
Դանիէլեան նշանագրերու թիւը՝ ասորական
ծագման կուսակից են, ինչպէս Վարդան պատ-
միչ. իսկ անոնք որ 24 թիւը ցոյց կուտան մեզի,
յունական գիրերը թուով 24 ըլլալով՝ յունա-
կան ծագման կողմն են. ինչպէս Մովսէս Խորե-
նացի և Դաւիթ Անյաղթ:

Ստուգիւ, եթէ Ասորերէն և Յունարէն գրե-
րը բաղդատենք, կը տեսնենք որ Ասորին ունի
5 տառ, որ կը պակսի Յունարէնի մէջ, և եօթն
տառ, որ Յունարէնի մէջ կան, բայց կը պակսին
Ասորերէնի մէջ:

Յունարէնը ունի $\epsilon, \eta, \theta, \pi, \upsilon, \psi, \omega$: Բայց կը պակսին Ասորերէն հինգ տառերը: Այսպէս եթէ Յունարէնի աւելի 7 գրերը աւելցնենք Ասորերէն 22ին վրայ, կ'ըլլայ 29. Կամ Ասորերէնի մէջ աւելի գտնուած 5 գիրերը աւելցնենք Յունարէնի 24ին վրայ, դարձեալ կ'ունենանք 29, որով կը լուծուի առեղծուածը:

ՎՐՈՅՐ.— Եօթը Ձայնաւորներուն վրայ ի՞նչ կարծիք ունիս:

ՆՈՐԱՅՐ.— (ա, ե, է, ը, ի, ո, լ) Ըստ իս անկարելի է որ գոնէ ա մայր ձայնաւորը չի գտնուէր Հայ վաղեմի նշանագրերուն մէջ, ըլլայ այն յունական, ըլլայ այն ասորական: Դիտելի է որ, Դանիէլեան նշանագրերը 22 չէին, այլ 29:

Վարդանագիրքն է-ի մասին կը գրէ «զի է գիր կայր յԱսորւոյն» դարձեալ և ասէն թէ արփոյն Ասորւոցդ կայ, է՞ր չառնուին»:

ՆՈՐԱՅՐ.— Հայ այբուբենը այնպիսի գրեր ունի որ, ոչ յոյնը ունի և ոչ ալ ասորին, ինչպէս են Յ, Ճ, Յ. իսկ այսօր, ըստ Հրաչեայ Աճառեան բազմավաստակ Հայ լեզուաբանին, լեզուաբանօրէն ապացուցուած է թէ՛ Հայերէնի մէջ ը, է, ի, (ժ, ծ, հ, ձ, ճ, ջ,) ձայները արդէն Բ-Գ գարուն գոյութիւն ունէին, թէեւ լեզուաբանօրէն լուսաբանուած չեն $\iota, \eta, \theta, \pi, \upsilon, \psi$, տառերը: Ահա թէ դիւրին կարծուած Հայերէնը ի՞նչ կնճիւղներ ու առեղծուածներ ունի իր մէջ:

ՎՐՈՅՐ.— Պատկանեան՝ Հայ Գրերու ծագումը արամէական կամ իրանեան կ'ընդունի. իսկ գրերուն իբրեւ որոշ թիւ կ'ընդունի 26 թիւը. ճիշդ է:

ՆՈՐԱՅՐ.— Եթէ կարծիքներու շարքը քակել սկսիմ շատ կ'երկարի ու միանգամայն կը կնճռոտի.— Այսպէս:

Լանդլուա Վարդանագիրքին զաւելչտ գրչին հետեւելով Գանիէլի գրերը ասորական կը նկատէ և թէ թուով 17. Լազարդ՝ հին գրերը կը նկատէ 22, որոնք են ա, բ, գ, դ, ե, զ, է, թ, ի, կ, Լ, մ, ն, պ, ո, ս, տ, ը, շ, փ, ք, պակասորդ մասը յետոյ աւելցուած է:

ՎՐՈՅՐ.— Արդեօք սիրած, պաշտած Հիւրչմանդ ինչ կարծիք սւնի. կարծեմ վերեւ ըսիք թէ՛ Վարդան պատմիչի հռչակաւոր 22 գրերը. Յունարէն էին:

Ուրեմն անիկա ալ կ'ընդունի առանց հաշուելու սակայն շ և օ Յոյն տառերը. սակայն Գանիէլեան գիրն էր որ Յունարէնի վրայ կերտած էր. Հիւրչման կ'ընդունի իբրեւ Գանիէլեան տառեր— ա, բ, գ, դ, ե, զ, է թ, ի, կ, դ, մ, ն, շ, ո, պ, ո, ս, տ, ո, փ, ք:

ՎՐՈՅՐ.— Հա՞պա միւս տասներկու հատը:

ՆՈՐԱՅՐ.— Վարդան պատմիչի կարծեօք կը պակսէին ը, ժ, Լ խ, ծ, հ, ճ, ճ, յ, չ, ջ, վ, է, ք:

ՎՐՈՅՐ.— Ուրիշ կարծիքներ կամ սնամէջ վարկածներ ալ կա՞ն դեռ:

ՆՈՐԱՅՐ.— Հ. Աղայեան Հայ Գրերու ծագումը ասորա-պարսկական կ'ընդունի: Այդ Ասորա-պարսիկ գիրերը թուով 22 են:

ՎՐՈՅՐ.— Աղայեանի երազով Ս. Մեսրոպի ստեղծած գիրերը որո՞նք են:

ՆՈՐԱՅՐ.— Ը, ս, ծ, ձ, ճ, ու, ց:

ՎՐՈՅՐ.— Փր. Միւլէր կարծեմ միամտու թեան մասին զիս ալ կը գերազանցէ:

ՆՈՐԱՅՐ.— Սիրելիս, ծանրախոհ եղիր, Միւլէր ինչ որ ալ ըլլայ գիտնական մըն է, փոյթ չէ թէ Հայ գրերու մասին, նախ՝ Ասողիկի, յետոյ Վարդանի տուած թիւը կ'ընդունի, կը շեշտէ թէ Հայ գիրը սեմական է, և իրաւամբ Պալմիրական գիրն է այն 22 տառերէ բաղկացած:

ՎՐՈՅՐ.— Ս. Մեսրոպ այդ աւանդավիպական քսան երկու թիւին վրայ իր ստեղծագործ հանճարէն գի՞ր մըն ալ չաւելցուց:

ՆՈՐԱՅՐ.— Մտի՛կ ըրէ որ, Միւլէրի կարծիքը լրացնեմ. Ս. Մեսրոպ նախ՝ կ'աւելցնէ 7 բաղաձայն և յետոյ 7 ձայնաւոր, որով Ս. Մեսրոպ միայն 14 գրերու հեղինակ կը թուի ըլլալ:

ՎՐՈՅՐ.— Բայց Միւլէր, չըլլայ որ նորէն կարծիք փոխէ, որովհետեւ այս Հայագէտը բանասէրներուն Գամելիոնն է, որ միշտ կարծիք կը փոխէ:

ՆՈՐԱՅՐ.— Ուրեմն կարգացեր ես Միւլլէրը
ծայրէ ծայր, անշուշտ դիտակ ես որ, հուսկ
ուրեմն դարձեալ փոխելով իր կարծիքը, կ'ըն-
դունի 20 դիր միայն:

ՎՐՈՅՐ.— Դեռ ուրիշ կարծիքներ ալ, եթէ
կան, շարէ', որովհետեւ շատ հաճելի են:

ՆՈՐԱՅՐ.— Հ. Սարգսեան կը կարծէ թէ
Դանիէլեան այբուբենը եդեսիոյ դպրոցին գործն
էր, Գ. կամ Դ. դարուն յարմարցուած Աստ-
րիի մը կողմէ և թէ ասորական կամ խալտական
ազփաբետքին յարմարութեամբ:

ՎՐՈՅՐ.— Վերջապէս կարծիք մըն ալ աս
է, Գարագաշեան ի՞նչ կը խորհի այս մասին:

ՆՈՐԱՅՐ.— Մատաթիա Գարագաշեան Մ.
Խորենացւոյ 7 ձայնաւորներուն վրայ հիմնուե-
լով՝ կ'ըսէ թէ՛ Դանիէլեան այբուբենն էր «ան-
շունչ և անկենդան այբուբէն մը բաղաձայններէ
կազմեալ, ո՛չ անձանօթ սակաւ դրագիտաց,
նոցին իսկ սահակայ և մեսրոպայ և նոցայոցն,
որոնց տուաւ Մեսրոպ շունչ և կենդանութիւն
մուծանելով Յունաց ձայնաւորներն»:

ՎՐՈՅՐ.— Սա Տոբթ. Տաղաւարեան էֆէնտին
որ նշգրակը թողած բանասիրութեան Մուսային
եաեւէն կը վազէ, ի՞նչ կարծիք ունի:

ՆՈՐԱՅՐ.— Տոբթ. Տաղաւարեան իր «Ծա-
գումն Հայ Տառից»ին մէջ Իսահակ Յարութիւն-
եանէ բնաւին չի տարբերիր: Նախ՝ Հայ սեպա-

գիր գրականութիւն մը կ'ընդունի, յետոյ Փիւնիկեան ազդեցութեան տակ, Հայ երկրորդ գրականութիւն մը մինչեւ Լուսաւորիչ, որ հրոյ ճարակ ըրաւ այդ հոյակապ գրականութեանց բոլոր յիշատակարանները, գրքերը, և թէ հին Դանիէլեան գրերը Փիւնիկեան ծագում ունէին թուով 22:

Ա, բ, գ, դ, է, վ, զ, հ, թ, ի, լ, խ, լ, մ, ն, շ, ո, պ, ք, ը, ս, տ: Մնացեալ տառերը կ'որոշուէին կէտերով և նշաններով, որոնք Մեսրոպի ձեռքը չհասան:

ՎՐՈՅՐ.— Մեր Մովսէս Խորենացի պատմահօր գրի գիւտի առթիւ, նկարագրած երազը կամ տեսիլքը ի՞նչ է:

ՆՈՐԱՅՐ.— Խորենացիի յերիւրանք մըն է, բայց այս անգամ ունի իր մէջ ճշմարտութեան լուսեղէն արմատը, Ս. Մեսրոպի ինքնուրոյն ըստեղծագործութեան համոզման քերթողական ըմբռնումն է այն:

ՎՐՈՅՐ.— Մեր պատմահայրը կը գրէ. «Առնա (իմա՛ Հռուփանոս) երթեալ. Մեսրոպայ և յայսմ եւս անչա՛հ մնացեալ, յաղթս ապաւինի, և տեսանէ ո՛չ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց, թաթ ձեռին աջոյ գրերով ի վերայ վիմի, (ձեռագիր մը կը յաւելու. ա, ե, է, ը, ի, ո, լ) զի որպէս զհետս ի

ձեան ընկալաւ քարն զկուտեալ գիծս։ Եւ ո՛չ միայն երեւութացաւ, այլև հանդամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթիցն ետեղծ զնշանադիրս մեր հանդերձ Հռութանոսիւ կերպածևեալ զգիրն Մեսրոպայառ ձեռն պատրաստ փոխադրելով զհայերէն ասթութայսն ըստ անսայթարութեան սիւղորբայիցն հելլենացւոց։»


ՆՈՐԱՅԻՐ։— Այսու Դանիէլեան, արամէական, պալմիրական, պարսկական, ասորական, փիւնիկեան կոչուած գիրերը, Հայ հնչիւնները արտայայտելու անբաւական ըլլալնին ի վեր հանելով՝ Ս. Մեսրոպի յաւէտ համբուրելի ճակտին կը բողբէ Հայոց գրերու հեղինակի այն անմահ դափնին, զոր Ղ. Փարպեցի ի զո՛ւր կը ճգնի, տեսակ մը գրական խարդախութեամբ խլելու տալ Ս. Սահակայ, ամէն առաւելութիւն տալ հայրապետին։ Թէեւ 15 դարեր ալ չկրցան գեռ շորթել Ս. Մեսրոպի Դափնին, որ մեծ Հացեկացիի քրտինքովը աճած էր, որուն խորհրդաւոր հովանին անհունօրէն կը տարածուի համասփիւռ հայութեան վրայ, առանց որուն Հայ անունը թանգարաններուն մէջ պիտի կարենային գանել... Մէկ խօսքով մեր գոյութեան Կոթողներն են Հայ Գրերը, ատաղձը կամ թէ նիւթը ո՛ր լեռնէն գայ, կը կտրանցնէ իր ինքնութիւնը, քանի որ արուեստագէտը իր հողին է որ կը պատկերացնէ հոն։

ՎՐՈՅՐ.— Խնդրեմ, շարունակէ՛ մի՛ ընդհատեր:

ՆՈՐԱՅՐ.— Հայոց գրերը ասորական, յունական կամ արաբական ասորա-պարսկական, արամէականէ ծնած պահլաւական մէկ խօսքով թէ իսկ ուղղարիչներն դեռ չլուսաբանուած անուններով ալ յորջորջուին (Դանիէլեան գրերը,) չպիտի կրնան խախտել սա ճշմարտութիւնը թէ՛ Ս. Մաշթոց Հայ բաղմաբաղաձայն լեզուին նկարագիրը և կամ հոգին տուաւ այն գիրերուն համեմատական ձեւափոխութեամբ:

ՎՐՈՅՐ.— Ուրեմն Հայոց գրերուն մէջ օտար ազբիւրներ չա՛տ կան:

ՆՈՐԱՅՐ.— Ըստ մեզ, օտար ծագումը հիմնուած է Կորիւնի «յայլոց գպրութեանց թաղեալք և յարուցեալք գիպեցան» խօսքէն, որ աստիճանաբար հասարակ հասկցուած է մեր մէջ, թէ այդ գրերը ուրիշ անգամ ալ փորձուած և իբր անյարմար թողուած էին: Իսկ ոմանք ալ ի հակառակէն, թէ այդ գրերը ո՛չ Յոյն, ո՛չ Ասորի և ոչ ալ Պահլաւ ծագում ունէին, այլ հին, արշակունեան Պահլաւերէնէ, որուն գործածութիւնը դադարած էր 272է ետք: Դեռ աւելին կայ, այս այբուբէնը շատ կը նմանի եղեր քաղզէականին, թերեւս, այս իսկ է պատճառը Դանիէլի քով գտնուելուն (!!!): Դանիէլ սոյն Արշակունեան Պահլաւ այբուբենէն հանելով Հայ գրերը զրկեց Մեսրոպի:



ՎՐՈՅՐ.— Եղբայր, ֆրանսացի, անգլիացի, մա՛նաւանդ գերմանացի գիտնականներ գլուխնին կը պայթեցնեն Հայ գիրն ու անոր ծագումը հասկնալու համար ու մենք՝ որ այդ գրերուն ազատեալներն ենք, տղու մը պէս կը հասկնանք այբբէն գիմը ու տղու պէս ալ անգէտ կը մեռնինք:

ՆՈՐԱՅՐ.— Բաւական է որ... Ս. Մաշթոցի ստեղծագործ Աջին գրոշմով վերածնած են անոնք, ուստի յամենայն դէպս հայկական են:

ՎՐՈՅՐ.— Ուրիշ աւելի՛ նոր կարծիք մըն ալ կա՞յ արդեօք:

ՆՈՐԱՅՐ.— Թէ Ս. Մեսրոպ ո՛չ թէ գիր կը փնտռէր, այլ գիրք. այն ալ ասորատառ կամ յունատառ և կամ պարսկատառ ու է գիրք, որուն լեզուն անպայման հայերէն ըլլար:

ՎՐՈՅՐ.— Շա՛տ ալ հաւանական է որ Ս. Մեսրոպ գիր չէր փնտռէր, այլ Հայ լեզուով օտար տառերով գիրքեր. բայց դո՞ւստ:

ՆՈՐԱՅՐ.— Եւ ո՛չ իսկ մէկ տող.

ՎՐՈՅՐ.— Ուրեմն, օտար տառերու միջոցաւ Հայալեզու գրականութիւն չկա՛յ ու չէ՛ եղած մեր մէջ:

ՆՈՐԱՅՐ.— Բազմաբաղաձայն Հայերէնը իր ձայնաբանական անբաղբատելի կնճռոտութիւններով Ասորի Դանիէլ մը չէր կրնար արտայայտ

տել: Այլ Հայածին հանճարի մը գործն էր այն
ՎՐՈՅՐ. — Հարկաւ .

ՆՈՐԱՅՐ. — Այս բազմապիսի ենթագրու-
թեանց քօսը մէկ կողմ թողլով, ես սա ճշմար-
տութեան կը հաւտամ թէ՛ Գանիէլեան այ-
բուբենը չունէր Հայերէն լեզուին յատուկ ձայ-
ները և այս իսկ պատճառաւ մէկ կողմ նետ-
ուեցաւ Ս. Մեսրոպի կողմէ: Ստեփաննոս Մալ-
խասեան՝ բեղմնաւոր Հայագէտն կը շեշտէ. —
եթէ Գանիէլեան դրերը պակասաւոր և Հայերէն
լեզուի անյարմար էին, կը նշանակէ թէ Հայերէն
լեզուին տառերը չէին :

ՎՐՈՅՐ. — Պ. Բանասէր, երանելին Մեսրոպի
խնկելի յիշատակին առջեւ՝ Հայ անհատին հա-
մար, նիւթն ու տարածութիւն կը պարտուին
կարծես, ու Մեսրոպներու և Սահակներու Պան-
թէոնը և կամ հարևայնադից մեծ տաճարը գեռ-
այսօր, ո՛հ, այն ալ 1500 տարի վերջ կը հիմ-
նուի ի ուրիւն սաշխարհի տարածուած Հայութեան
գիտակցութեան մէջ, որուն հրաշափառ արտա-
յայտութիւնն է այս 1500ամեայ աննախընթաց
մեծ Յորբէլեանը, որուն հերոսապետն է Ս. Մեսրոպ .
իսկ իր Անպարտելի Գունդն են Իւրաստեղծ Գի-
րերը, որոնցմով կրցաւ պաշտպանել ընդդէմ
օտար հոսանքներու Հայ առանձնայատկութիւնը:
Ս. Մեսրոպ համաձուլուելու վտանգէն ազատեցմեզ:

ՆՈՐԱՅՐ. — Մէն մի գիր իր մէջ ունի ե-


րանլի Մեսրոպի սրտէն կայծ մը, հայկական աչքերէն՝ արցունք մը, շրթներէն՝ համբոյր մը, հոգիէն՝ աղօթք մը և միտքէն թռիչք մը. իսկ ամբողջութեամբ Հայ գեղապանծ և մեծագանձ լեզուն, գրականութիւնը և հետեւաբար բովանդակ ազգութիւնը կը բովանդակեն:

Ես կ'աւելցնեմ թէ իւրաքանչիւր գիր օտար աւերիչ հոսանքներու դէմ ցցուած անխախտ թուժք մըն է, աշխարհի որ կողմէն ալ ըլլայ այն:

ՎՐՈՅՐ.— Պ. ՆՈՐԱՅՐ սանձէ՛ Պէքասդ, ու ինձի որոշակի ըսէ թէ՛ Դանիէլեան նշանագրերը մեր Ե. դարու Հայերէնին կը յարմարէի՞ն թէ ոչ:

ՆՈՐԱՅՐ.— Սիրելիս, Դանիէլեան գրերը ոչ ոսկեղէն դարու հայերէնին և ոչ իսկ նախորդ դարերու լեզուին կը պատշաճէին, պարզապէս բնա՛ւ հայերէն գիր ո՛չ կար և ոչ ալ եղած էր և հետեւաբար սոյն 1500 ամեակի համազգայնօրէն պաշտելի ու անմահ Յօբելեարն՝ Ս. Մեսրոպ էր միակ հեղինակը գլուխ գործոց ՀԱՅ ԳՐԵՐՈՒՆ:

ԵՕԹՆ ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐ



Ա Ն Ձ Ե Ր

Ա.—	Անահիտ
Ե.—	Երուանդունի
Է.—	Էգիմե
Ը.—	Ըղճանոյշ
Ի.—	Իմաստունի
Ո.—	Ոգունի
Ի.—	Վեհանոյշ
Վ.—	

Ա. ՏԵՍՏ.ՐԱՆ

(Տեսարանը կը ներկայացնէ շքեղ բեմ մը, ուր Ս. Մեորոպի մեծագիր պատկերը դրուած է: Այդ ծաղկապսակ պատկերին առջև կարգաւ շարուած են Եօթը Զայնաւորներն ճերմակ տարազով:)

Ա.— Աստուած իմ ինչ գեղեցիկ Տօ՛ն մըն է այս, (կերակէ) Ահա՛ մեծ Սուրբն, Մեծ Ուսուցիչն առաջին—

Իր սաներով կ'անցնի ուրախ, մինչ Աջին՝
Կանգնած է ՅՈՅՄՆ իբր հրեշտակ, ոչ ս'է Այս

Ա.— (Սթափելով իր տեսիլքէն)

Արաքան եմ եո, որ իմ ձայնովս միացնեմ,
Ինչպէս Հայ բարդ բաղաձայններն իրարու,
Նո՛յնպէս Հայոց ցրուած սրտերն շա՛տ հեռու.
Անկախ մայրն եմ Չայնաւորաց, ե՛ս Այբն եմ:

Ե.— Եղբայրութեան երազն եմ ես երջանիկ,
Բոլոր անհաշտ Բաղաձայններն համարիւն.
Կը հաշտեցնեմ ու կը վարեմ մշտտրթուն:
«Է» Քոյրս յաճախ տեղըս կ'անցնի, մ'ընդունիք:

Է.— Էակ մ'եմ ես քոյրն ամենուն, ոտքս սահին,
Ըսկըզբնատառ ըլլալ երբեք չե՛մ ուզեր,
Յաճախ կ'երթաք գըրգռել Եէչին խոր յոյզեր,
Ինձմով գրեց Մեսրոպ անունն Անմահին:

Ը.— Ըլլալ չ'ըլլալ ընկերութեանց հոգն միակ,
Կ'արտայայտեմ, ըմբոստ ոգի մ'ունիմ ես,
Կըռուիմ, կիյնամ բառերու մէջ, անհաշտ, վէս,
Ընտանիքի սկզբնատառն եմ, սէ՛ր համակ:

Ի.— Իմաստութիւնն եմ ե՛ս, լոյսը մարդկութեան,
Դըպրոց, տաճար, մինչ իսկ երկինք աստղազարդ,
Զիս կը պաշտեն, առանց ինձի, դուք՝ էք զարդ,
Որ այսօր կար՝ վաղը թօշնիք ծաղկի նման:

Ո.— ՈՍԿԵԴՄՐՆ եմ, Ս. Թարգմանչաց եմ որդին,
Իմ ծոց կ'ապրին Սահակ Մեսրոպ և Սանունք,
Հայու մըտքին գրաւոր թռիչքն, հողւոյն՝ խունկ,
Հայ փառքերու Գանձարանն եմ, բայց խըրթին:

Ի.— Իբևեմ պսակ իմ քոյրերուս հրաշալի,
Զըկայ բառ մը որ, ինձմով սոսկ ըսկըսի,
Վեցեակ քոյրերս, Հայ Մուսաներ պէս լոյսի,
Բաժնուեցան Հայ լեզուի Գանձն, որ փայլի:

Բ. ՏԵՍԵՐԱՆ

(Ի Վ.— Ի փոխուած բեմ կ'երկ)

Բայց «Կրրկնաւոր» դառնամ, կըլլամ վէ՛վ անձայն,
Առաջին բառն, որ կը թըռչի շըրթներէս,
Չըքնա՛ղ Քոյրերս, փախէ՛ք, կըլլայ գո՛ռ վըրի՛ծ,
Որ Հայաստան Գերեզման մ'է, Աւե՛ր սև . . . :

Եկէ՛ք Քոյրերս, ողջագուրուինք ու տօներք,
Յիշատակն մեր խընկելի Հօր՝ Մեսրոպայ:
Շունչ, թև տալով սա՛ տառերուն անոպայ,
Որ «բաղաձայն» կը յորջորջուին, իսկ «կեա՛նք» մենք:

Ա.— Կեցցե՛ս Հիւն մենք քեզի հետ միաձայն,
Գաղափարաց տաճար կանգներք հէք Հայուն,
Քաղաքա՛կրթութեան զինւորն ենք աննկուն,
Հա՛ պօն յառաջ, ՀԱՅ ԱՂԳԻ Է, մե՞նք իր Չա՛յն:

Գ. ՏԵՍԱՐԱՆ

Ամէնքը.— (Ս. Մեսրոպի պատկերին շուրջ բոլորած)
Հընգետասան դարուց պըսակն վե՛հ ճակտիդ՝
Կը բոլորենք, ո՛վ ՀԱՅ ԱՆՄԱՀ, ՀԱՅ ՄԵՍԻԱ,
Օչականի մէջ թաղուած չե՛ս Հայորդիդ,
Այլ մեր սըրտին՝ ՀԱՅ ԱՂԳԻՆ կոթո՛ղգ է անմահ:



ԳԻՆ 2 ՂՐՆ.

